**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐԻ**
**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

Թիվ 15

05.03.2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ

Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ավագանու 28.02.2019թ կայացած թիվ 2 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 8 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ -04343-2019
05 03 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 3-Ն

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արտաշար համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ կողմ / 4 / դեմ/0/ ձեռնպահ/0/

1. Բրոյան Շ.
2. Խաչատուրյան Խ.
3. Խուդոյան Ա.
4. Հակոբյան Վ.

Համայնքի ղեկավար՝ Մ. Օհանյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար

համայնքի ավագանու 2019թվականի

փետրվարի 28-ի թիվ 3 որոշման

1.Օրակարգը հաստատելու մասին:

2. Արտաշար համայնքի սոցիալապես անապահով, թվով 1 ընտանիքի դրամական օգնություն հատկացնելու մասին:

3.Կանանց տոնին ընդառաջ՝ թոշակառուներին նվերներ գնելու և միջոցառում անցկացնելու մասին:

4.2018թ-ի տարեկան հաշվետվության մասին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 4-Ն

### ԱՐՏԱՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արտաշար համայնքի սոցիալապես անապահով, թվով 1 ընտանիքի դրամական օգնություն տրամադրելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ կողմ / 4 / դեմ/0/ ձեռնպահ/0/

1. Բրոյան Շ.
2. Խաչատուրյան Խ.
3. Խուդոյան Ա.

4.Հակոբյան Վ.

**Համայնքի ղեկավար՝ Մ. Օհանյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար

համայնքի ավագանու 2019թվականի

փետրվարի 28-ի թիվ 4 որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ

1.Պողայան Մարիամ Ջանիբեկի----------100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 5-Ն

### ԹՈՇԱԿԱՌՈՒ ԿԱՆԱՑ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ, ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արտաշար համայնքի բնակիչներին` թոշակառու կանանց, նվերներ գնելու և միջոցառում անցկացնելու նպատակով համայնքի բյուջեի <<Երիտասարդական ծրագրեր>> բաժնից հատկացնել 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Ավագանու անդամներ`  կողմ / 4 /  դեմ/0/  ձեռնպահ/0/

1. Բրոյան Շ.
2. Խաչատուրյան Խ.
3. Խուդոյան Ա.

4.Հակոբյան Վ.

Համայնքի ղեկավար` Մ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 6-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտաշար համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Ավագանու անդամներ՝ կողմ / 4 / դեմ/0/ ձեռնպահ/0/

1. Բրոյան Շ.
2. Խաչատուրյան Խ.
3. Խուդոյան Ա.
4. Հակոբյան Վ.

**Համայնքի ղեկավար Մ. Օհանյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար

համայնքի ավագանու 28.02.2019թվականի

թիվ 2 արտահերթ նիստի

թիվ 6 որոշման

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայքի կողմից ներկայացված հաստատված բյուջեի համաձայն՝ 2018թ-ի տարեսկզբի մնացորդը կազմում է 1131,824 հազար դրամ, եկամուտներ է նախատեսվել 31378,5 հազար դրամ, որից վարչական բյուջեով 31378,5 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով 6119,324 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ վարչական բյուջեի եկամուտների մասով կատարվել է 100,7 տոկոսով, կամ պլանով նախատեսված 31378,5 հազար դրամ դրա դիմաց կատարվել է 100,3 տոկոսով 31613,8 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների գծով 7103,0 հազար դրամի դիմաց կատարվել է 7338,3 հազար դրամ, իսկ պետ բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով՝ 24275,5 հազար դրամ:

## ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 3463,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 2889,7 հազար դրամ:

Գույքահարկի գծով նախատեսվել է 1850,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 2840,4 հազար դրամ:

Ոգելից խմիչքների թույլտվության համար նախատեսվել է 80,0 հազար դրամ փաստացի գանձվել է՝ 80,0հազար դրամ:

Համայքի սեփականություն համարվող հողերի վարձավճար է նախատեսվել 800,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 764,0 հազար դրամ:

Տեղական վճարներ է նախատեսվել 5,0 հազար դրամ,փաստացի գանձվել է 2,0 հազար դրամ:

Վարչական իրավախախտումների համար 5,0 հազար դրամ,փաստացի գանձվել է 0 դրամ:

Այլ վճարներ նախատեսվել է 900,0 հազար դրամ, փաստացի գանձվել է 589,0 հազար դրամ:

Այլ մուտքեր է գանձվել 173,2 հազար դրամ:

# ԾԱԽՍԵՐ

Արտաշարի համայքապետարանի 2018թ-ի բյուջեով ծախս է նախատեսվել 32510,3 հազար դրամ փաստացի ծախսվել է 28213,7 հազար դրամ , իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 6119,3 հազար դրամ , փաստացի ծախսվել է 4698,8 հազար դրամ;

Վարչական բյուջեով աշխատավարձ և հավելավճարներ հոդվածով ծախս է նախատեսվել 16051,0 հազար դրամ փաստացի ծախսվել է 15463,8 հազար դրամ:

Սոց օգնություն է նախատեսվել 1600,0 հազար դրամ , փաստացի ծախսվել է 1600,0հազար դրամ:

Այլ մշակույթային միջոցառումների համար նախատեսվել է 990,0 հազար դրամ , փաստացի ծախսվել է 900,0 հազար դրամ:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար ծախս է նախատեսվել 8740,0 հազար դրամ , փաստացի ծախսվել է 6451,1 հազար դրամ :

Պահուստային ֆոնդ է նախատեսվել 4987,5 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 6119,3 հազար դրամ , փաստացի ծախսվել է 4698,8 հազար դրամ:

Շենքերի և շինությունների կառուցման հոդվածով նախատեսվել է 4319,3 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2898,8 հազար դրամ:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման հոդվածով նախատեսվել է 900,0 հազար դրամ , փաստացի ծախսվել է 900,0 հազար դրամ:

Նախագծի արժեք նաղատեսվել է 900,0 հազար դրամ , փաստացի ծախսվել է 900,0 հազար դրամ:

Համայքի ղեկավար՝ Մ. Օհանյան

Հաշվապահ՝ Զ. Սարգսյան